


ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
ACADEMIA ARMENA SANCTI LAZARI

Խմբագրությունն իրաքանչիւր յօդուածի հեղինակին կը թողու արտայայտուած գիտական կարծիքներու պատասխանատւութիւնը, գնահատելով համդերձ հետազօտական մակարդակի վրայ իրաքանչիւրին մերժիմ արժէքը:

La Rédaction laisse aux différents auteurs la responsabilité des opinions exprimées dans leurs articles, sans vouloir préjuger de la valeur intrinsèque de ces derniers au niveau de la recherche.

Կը հրատարակուի «Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան» միաստով
Publié avec le concours de la «Fondation Calouste Gulbenkian»



1852-89

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՄՏԱԾՈՒՄ

Իմաստասիրութիւնը՝ հոգիին գործունէութեան բարձրագոյն կատարը կը նկատէր Հեկէլ: Ձայնակցինք կամ ոչ գերման փիլիսոփային ընդհանուր տեսաբանութեան, իրողութիւն մըն է, զոր քիչեր փորձած են ժխտել, թէ մարդկային հոգեկանութեան ամէնէն զարգացած արտայայտութիւններէն մէկն է իմաստասիրական մտածումը:

Դաւիթ Անյաղթի յոբելեանը, որ տօնուեցաւ վերջերս համազգային եւ միջազգային շուքով, անխուսափելիօրէն կը դնէ մեր առջեւ հայ իմաստասիրական մտքի հարցը, թէ եղած է արդեօք եւ եթէ սոյն՝ ի՞նչ հանգամանքներով ու տարողութեամբ:

Այս ընդհանուր հարցին առնչութեամբ, պատմական տուեալներու գետնին վրայ, վերջին տասնամեակները զգալի յառաջդիմութիւն մը նշեցին՝ շնորհիւ հայրենի գիտնականներու նպաստին, ըլլա՛յ պատմական մենագրութիւններու ձեւով, ըլլա՛յ բնագիրներու ու սովորականութեամբ եւ հրատարակութեամբ: Վ. Չալոյեանի, Հ. Գաբրիէլեանի, Գ. Բրուտեանի, Ս. Արեւշատեանի եւ ուրիշներու աշխատասիրութիւնները կը ներկայացնեն, այս ուղղութեամբ, հիմնական հանգրուաններ: Ասով հանդերձ՝ պարտաւոր ենք նշել, որ հայ անցեալին իմաստասիրական յուշարձաններուն նկատմամբ՝ մինչ բանսիրական ճիգը որոշ չափով հասուն արդիւնքներու արդէն հասած է, բուն պատմագրութիւնը ընդհակառակն՝ որ պէտք էր յանգիլ տեւողականօրէն լուսաբանելու հայ իմաստասիրական մտքի մը գոյութեան յարակից հարցերը՝ համեմատաբար աւելի սաղմնային լինելով մը կը պարզէ: Արդարեւ, այս վերջինիս համար նախապայման է յստակ սահմանումը որոշ իմացումներու, առանց որուն զժուար է հասնիլ ամուր եւ ներյարիր կառուցուածքի մը:

Նախ շատ կարեւոր կը թուի հանգամանօրէն բանաձեւել՝ «Իմաստասիրական մտածում» իմացման ինքնութիւնը, սահմանը, մակարդակները, տիպերը, նրբերանգները:

Երբ խմաստասիրական մտածումը կ'ըմբռնենք իր սեղմ իմաստով — իբր գիտականորեն մշակուած տեսաբանութիւն մը՝ որու ձգտումն է իրականութեան խորագոյն քացատրութեան մը որոնումը, բոլոր մասնակի հորիզոններէն անդին, իր քացարձակ ընդհանրութեան մէջ —, հարկ է յիշել որ այս «գիտութիւն»ն ալ, ուրիշ գիտութիւններու նման, երեւան եկած է սրտմական եւ աշխարհագրական որոշ տարածքի մը վրայ ու, երկար դարերով, մնացած է իբր մենաշնորհը, հազուադէպօրէն փթթող մէկ ծաղիկը, մարդկութեան որոշ մէկ զանգուածին։ Իր այս բուն ինքնութեան մէջ ըմբռնուած՝ իմաստասիրութիւնը անհրաժեշտօրէն կը զանազանուի պարզ «աշխարհահայեացք»էն, որ ընդհակառակն ժամանակագրական եւ աշխարհագրական շատ աւելի ընդարձակ տարածութիւն ունի եւ որուն կրնանք հանդիպիլ նաեւ նախագիտական մակարդակներու վրայ, ըլլա՛յ անհատներու, ըլլա՛յ հաւաքականութիւններու մօտ։

Կարեւոր է նաեւ՝ յստակօրէն բանաձեւել զանազանութիւնը եւ տարբերութիւնը ընդմէջ «գաղափարախօսութեան» եւ իմաստասիրութեան, նկատի ունենալով միանգամայն՝ թէ գաղափարախօսութիւնը սոսկ արդի ժամանակներու յատուկ երեւոյթ մը չէ եւ թէ կըրնայ ներկայանալ ըլլա՛յ ժամանակական, ըլլա՛յ միջոցային շատ լայն տարածականութեամբ, այն իմաստով՝ որով Տիմեգիլ մը կը խօսի, օրինակի համար, «հնդեւրոպական գաղափարախօսութեան» մասին։ Զիշտ է որ ըլլա՛յ աշխարհահայեացքը, ըլլա՛յ գաղափարախօսութիւնը կրնան, որոշ տեսակէտներէ եւ լայն առումով մը, իմաստասիրութիւն նկատուիլ։ Նմանապէս «իմաստասիրական» մէկէ աւելի երեսակներ կը պարզեն՝ կրօնքը, ինչպէս դիցաբանութիւնը։ Իայց եւ այնպէս, երբ կ'անցնինք գիտականօրէն աւելի յանձնառու ընթացիկութեան մը, անհրաժեշտ է որոշակիօրէն աչքի առնել ունենալ իւրաքանչիւրին ուրոյն ինքնութիւնը եւ այդ ինքնութեան համապատասխան յեղաշրջումները։

Հարցը աւելի մասնաւորելով, ուրիշ կարեւոր պարագայ մը՝ զոր կարելի չէ զանց ընել՝ սա է. զանազանութիւնը՝ ընդմէջ մէկ կողմէ իմաստասիրական մտածումի ստեղծարար մշակման եւ միւս կողմէ լոկ ուսուցողական, դասաւանդումի ուղղութեամբ կատարուած իմաստասիրական աշխատանքին։ Նշանակալից երեւոյթ է, անշուշտ, որ մշակութային տուեալ աւանդութեան մը մէջ տեղ գտած ըլլալ իմաստասիրութեան ուսումը. բայց ասիկա չ'ենթադրեր անպայման որ այդ ծիրին մէջ երեւան եկած ըլլայ ստեղծարար մտածում մը։ Ուրիշ հարց՝ թէ «ստեղծարար»ն ալ ունի իր սանդղամատերը։

Ինչ որ ցարդ ըսինք՝ կը վերաբերի իմաստասիրական գործունէութեան, գիտաւորապէս, մտածողութեան մակարդակին յարակցութեամբ, ըլլա՛յ զուտ մտածողութիւն՝ ինչպէս բուն իմաստասիրութիւնը,

թիւնը, կամ պատկերաւոր՝ ինչպէս դիցաբանութիւնը, կամ վերին յայտնութեան մը գաղափարէն առաջնորդուած՝ ինչպէս կրօնքը, եւն.։

Հայ իմաստասիրական մտածումի մը հարցադրութեան նկատմամբ՝ յստակումի կարօտ ուրիշ հիմնական կէտ մըն է այն՝ թէ ինչ առումով եւ ինչ աստիճանով կարելի է «ագգային» մակդիր մը վերադրել իմաստասիրական մտածումին։ Պարզ է որ յաճախ կը խօսինք յոյն կամ գերման կամ ֆրանսական իմաստասիրութեան մասին, ինչպէս կրնանք խօսիլ նաեւ գիտութեան այլ ճիւղերուն նկատմամբ, խօսքը վերաբերելով այդ ճիւղերուն մէջ որոշ երկրի մը կամ հաւաքականութեան մը գիտական արտայայտութիւններուն եւ արտադրութեան ամբողջութեան, առանց ըստ ինքեան բնորոշիչ իմաստ մը ընծայելու ագգային մակդիրին՝ առաւելաբար նկարագրական աշխարհագրական բնոյթ կրող այդ խօսելակերպին մէջ։ Կարելի՞ է, արեւմտահայերէն իմաստասիրական մտածումին ալ որակականօրէն սակայն, խորհիլ՝ իմաստասիրական մտածումին ալ որակականօրէն ագգային բնորոշում մը վերադրել, ինչպէս՝ օրինակի համար՝ արուեստին կամ գեղարուեստական գրականութեան։ Այլ խօսքերով՝ կարելի՞ է հաւաստել որ երկրի մը մէջ ծլած իմաստասիրական մտածումի ձեւ մը եղական յարաբերութիւն մը ունի այդ երկրին հաւաքականութեան հետ։ Անշուշտ նման հարց մը իմաստ կ'ունենայ նախ եւ առաջ փիլիսոփայական մտածումին ստեղծարար ձեւերուն նկատմամբ, բայց երկրորդաբար եւ որոշ համեմատութիւններով՝ նաեւ այդ ձեւերէն մէկուն կամ միւսին, տուեալ ժամանակի մը մէջ, տուեալ հաւաքականութեան մը կողմէ գերակշիռ տարողութեամբ մը իւրացումին նկատմամբ։

Եթէ դրական պէտք է ըլլայ վերոգրեալ հարցին պատասխանը, ինչպէս կը կարծենք, իմաստասիրութեան պատմաբանին հիմնական դերերէն մէկն է, ուրեմն, վերլուծել ու վերհանել այդ տուեալ կապակցութիւնները, ցուցադրելով անոնց պատմական հանգուցաւորումը։ Այս դերը կրնայ ստանձնուիլ, անշուշտ, տեսաբանական տարբեր մեթոդներով ու տարբեր գիտականութիւններէ, ինչպէս են՝ օրինակի համար՝ գաղափարապաշտականը, դրապաշտականը, նիւթապաշտ—տրամասականը, եւն.։ Միայն թէ, պատմաբանական գիտակցութեան ներկայ հանգրուանին՝ բոլոր տեսակի մեթոդներուն ցոլման ալ կը ներկայանայ այլեւս պարտադիր հրամայական մը, այն համար ալ կը ներկայանայ վստաստիլ ժամանակավրիպումէ. այլ խօսքով, չ'իյնալով ուսումնասիրութեան առարկայ եղող մտածումին հետ՝ այդ մտածումին ծագման մասին ուսումնասիրողին կողմէ տրուելիք մեկնաբանութիւնը։ Օրինակով խօսինք. Լիւսիէն Կոլտման կ'ուսումնասիրէ իմաստասիրական մտածումին յեղաշրջումը մարքսական տեսաբանութեան ելակէտէն. այս մեթոդներով՝ մինչ փասքալի իմաստասիրութիւնը կը նկատէ արտայայտութիւնը նորակազմ ազնուա-

կան դասակարգի մը, որ էր «սոցիալական ազնուականութիւն»ը, Տե-
քարթի մտածումը՝ ընդհանրապէս՝ կը համարէ թէ արտայայտու-
թիւնն ըլլայ այսպէս կոչուած պետական «երրորդ կարգ»ին, որ էր՝
տակաւ բարձրացող քաղքենիութիւնը: Կարելի է համակարծիք ըլլալ
կամ ոչ՝ Կոլտմանի այս մեկնաբանութեան հետ: Բայց պէտք է ընդու-
նիլ անոր սա արժանիքը՝ որ Կոլտման չ'իյնար ժամանակավրէպ մեր-
ձեցումներումէջ, յիշեալ իմաստասէրներուն վերադրելով մարքսական
կամ «նախամարքսեան» տեսութիւններ, ինչպէս փորձուած են ընդ-
հանրապէս ընել՝ այլեւայլ ուղղութիւններու ուրիշ պատմաբաններ:

Կը խորհինք թէ տակաւին շատ ճամբայ կայ կտրելիք՝ զետեղե-
լու համար, ըստ կարելոյն, առարկայական հիմքերու վրայ հայ ի-
մաստասիրական մտածումին զարգացումը: Նաեւ դժուար է ըսել,
առ այժմ, թէ արդեօք կա՞յ հոն եւ թէ ի՞նչ չափով «ստեղծարար»
չունչ մը: Ինչ որ ալ ըլլայ, սակայն, յայտնի է որ արդ ստեղծարար
չունչը չի համեմատուիր, մնալու համար հին աշխարհի շրջապա-
տին մէջ, յոյն կամ հռոմէական փիլիսոփայութեան հետ: Այս չի
նշանակեր, ի հարկէ, թէ անցեալի հայ իմաստասիրական միտքը
զուրկ եղած ըլլայ նշանակութենէ եւ արժէքէ: Երբեք բաւականաչափ
պիտի չկրկնենք վիթխարի Պատմահօր իմաստութեան պատգամը՝
«թէպէտ եւ եմք ածու փոքր» եւլն.:

Ինչ որ կը կոչուի «յունաբան» դպրոց, եւ զոր ԺԹ. դարու լեզ-
ուական ուսման թիղմը միակողմանիօրէն ստորադնահատած է՝ լեզ-
ուական «ոսկեդար»ու ծայրայեղ պաշտամունքէն մղուած, իրականին
մէջ մեծղի, նշանակալից երեւոյթ է՝ իր թերի կողմերով հանդերձ:
Զ. դարու ընթացքին լրիւ կերտուած է արդէն՝ յունարէնի «գիտար-
ուեստական» կատարելութեամբ՝ իմաստասիրական-գիտական լեզու
մը, որ ոչ միայն ողնածուծը կը կազմէ, ղեռ այսօր իսկ, մեր գիտա-
կան հայերէնին, այլ նաեւ կատարելագոյն օրինակը կ'ընծայէր, յետ
յունարէնի, գիտարուեստական-դպրոցական ճշգրտութեան, լրովան-
դակ միջերկրականեան-միջին-արեւելեան աշխարհին մէջ, երբ տա-
կաւին գոյութիւն իսկ չունէր գրաւոր արարներէն եւ «դպրոցական»
լատիններէնը հազիւ կը սկսէր ձեւանալ: Ձեմ կարծեք թէ կը տխա-
լինք՝ եթէ ըսենք որ հելլենաբան դպրոցի իմաստասիրական արտա-
դրութիւնը, յունարէնէն վերջ, լեզուականօրէն ամէնէն յառաջացած
արտայայտութիւնը կը կազմէ իմաստասիրական դրութեան յին մտա-
ծումի մը, յատկապէս Արիստոտէլի եւ Պորփիւրի նման ուժղւորէն
դրութեան կան իմաստասէրներու թարգմանութեամբ:

Հայ մշակոյթի պատմութեան մէջ իմաստասիրական մտածումին
ուսումնասիրութիւնը յղի է տակաւին նորանոր զարգացումներու:

ԲՆԱԳՐԵՐ
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ
TEXTES ET ETUDES